

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Հայաստան-Թուրքիա Երկխոսութեան Փորձ Մը Եւս

Հայաստանի եւ Թուրքիոյ կառավարութիւնները նշանակած են իրենց ներկայացուցիչները՝ երկու երկիրներուն միջեւ բանակցութիւններ սկսելու նպատակով: Այս կը յաջորդէ ամիսներէ ի վեր դրական ազդակներու մասին երկուստեք հնչող յայտարարութիւններուն: Նաեւ Ամերիկեան մամուլը կը հաղորդէ որ, նախագահ Ճօ Պայտրն անձնապէս դիմած է Թուրքիոյ նախագահ Էրտողանին՝ բանալու Հայաստանի հետ սահմանը: Կը կարծուի որ երոպական երկիրներ՝ գլխաւորութեամբ Ֆրանսայի «վարագոյրի ետեւէն» բաւական ջանքեր գործադրած են Երեւան-Անգարա երկխոսութեան հասնելու ուղիութեամբ:

Յետեւաբար, անակնկալ չէր երբ հաղորդուեցաւ բանագնացներու նշանակման եւ անոնց միջեւ մտաւարտ հանդիպման մասին տեղեկութիւնը: Միացեալ Նահանգներն ու Ֆրանսան անմիջապէս ողջունեցին երկու հարեւան երկիրներուն միջեւ երկխոսութիւն սկսելու գծով առնուած քայլերը: Ռուսաստան եւս, տարբեր առիթներով արտայայտուած էր նման դրական քայլերու կարելորութեան մասին:

Քննարկուելիք օրակարգերու մասին առայժմ յստակ տեղեկութիւն չկայ, սակայն Թուրքիոյ կողմէ փակուած սահմաններու բացումը եղած է այն գլխաւոր հարցը, որու մասին յաճախ խօսուած է:

Ինչպէս 2009-ին ստորագրուած «Հայ-Թրքական Փրոթոքոլներու» պարագային, ներկայիս եւս Հայաստանի ու սփիւռքի մէջ կան կարծիքներու տարբերութիւններ՝ հիմնուած պատմական իրադարձութիւններու վրայ, որոնք կը շարունակեն մնալ մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ: Կայ տեսակետ, թէ պէտք է ամբողջութեամբ բացառել թրքական կողմի հետ որեւէ երկխոսութիւն, քանի որ ան ոչ մէկ օգուտ կրնայ բերել Հայաստանին: Իսկ, սահմաններու բացումով Հայկական շուկան կրնայ ողողուիլ թրքական ապրանքներով, որոնց ներածումը ամբողջութեամբ արգիլուած է ներկայիս, Արցախեան վերջին պատերազմին Թուրքիոյ մասնակցութեան լոյսի տակ: Հայաստան կ'ստանայ այն է թէ, աշխարհագրականօրէն կը գտնուի մը տարածաշրջանէ մը ներս, ուր շրջապատուած ենք

Երեւանի Եւ Անգարայի Նշանակած Բանագնացները Շուտով Կը Հանդիպին



Հայաստանի բանագնաց՝ Ռուբէն Ռուբինեան

Երեւանի եւ Անգարայի կողմէ նշանակուած բանագնացներ՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալ՝ Ռուբէն Ռուբինեան եւ Ուաշինկթընի մտաթուրքիոյ նախկին դեսպան՝ Սերտար Քըլըճ շուտով կը հանդիպին, այս մասին յայտնած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Մեւլուտ Չաւուշօղլուն:

Պաշտօնական Երեւանը չի յստակացներ, թէ հանդիպման ժամկէտը արդէն պարզ է, թէ ոչ: ԱԳՆ-ի խօսնակը «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, որ



Թուրքիոյ բանագնաց՝ Սերտար Քըլըճ

«Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ երկխոսութեան գործընթացի շրջանակներում յատուկ ներկայացուցիչներին հանդիպման ժամկէտների վերաբերեալ պայմանաւորուածութեան դէպքում հանրութիւնը պատշաճ կերպով կը տեղեկացուի»:

Ընդհանուր առմամբ հայ-թրքական երկխոսութեան գործընթացի մասին հայկական կողմը բանագնացի նշանակումէն բացի, այլ տեղեկութիւն չէ յայտնած, իսկ Ռուբէն Ռուբինեան հրաժարած է

Շար.ը էջ 6

Հայաստանը Ներկայացնող Մալեման Մանկական Եւրատեսիլի Յաղթող



Հայաստանը երկրորդ անգամն է, որ կը յաղթէ մանկական Եւրատեսիլը:

Կիրակի օր Փարիզի մէջ կայացած «Մանկական Եւրատեսիլ-2021» երգի մրցոյթին յաղթեց Հայաստանը ներկայացնող Մալեման՝ «Քամի քամի» երգով: 14-ամեայ երգչուհին առաջին տեղը

գրաւեց ընդհանուր 224 միաւորով: 218 միաւորով երկրորդը Լեհաստանն է, 187 միաւորով երրորդը հորիզոնականը գրաւեց Ֆրանսան: Հայաստանը երկրորդ անգամն է, որ կը յաղթէ մանկական Եւրատեսիլին՝ առաջին յաղթողը Վլատիմիր Արզումանեանն էր՝ 2010 թուականին:

Շնորհաւոր Սուրբ Ծնունդ

Կաթողիկէ համայնքի Ս. Ծննդեան տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ Հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, առողջութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը:

«Երկրի Համար Խաղաղ Ձարգացման Դարաշրջան Բանալու Հնարաւորութիւն Կը Տեսնենք». Փաշինեան

«Սոչիում եւ Պրիւքսէլում տեղի ունեցած հանդիպումներից յետոյ կայ հնարաւորութիւն քայլքայլ առաջ շարժուելու «Հայաստանի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու ճանապարհով», Դեկտեմբեր 20-ին, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան ԱԱԾ-ի մարմիններու աշխատողի օրուան նուիրուած նիստին ունեցած իր ելույթով:

Վարչապետը այս շրջածիրէն ներս եւ նոր ձեւաւորուող միջավայրին մէջ կարեւորած է յատկապէս Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) դերակատարութիւնը. - «Հայաստանի կառավարութիւնը հռչակել է Հայաստանի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու քաղաքականութիւն, ինչը նշանակում է, որ այս նոր միջավայրում ԱԱԾ առաջ դրուած խնդիրները շատ աւելի են բարդանալու: Որովհետեւ, նախ, քաղաքական յայտարարութիւնները դեռեւս ինքնին չեն նշանակում, որ կը յաջողուի դա իրականացնել, եւ երկրորդը, եթէ մենք այս ուղղութեամբ յաջողութեամբ յաջողութեամբ առաջ շարժուենք, մարտահրաւէրների կառավարումը լինելու է շատ աւելի բարդ եւ շատ աւելի դժուարին: Բայց ուզում եմ նաեւ արձանագրել, որ Սոչիում եւ Պրիւքսէլում տեղի ունեցած հանդիպումներից յետոյ ես տեսնում եմ հնարաւորութիւն, որ մենք կարող ենք քայլքայլ առաջ շարժուել մեր երկրի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու ճանապարհով: Յամենայնդէպս, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն իրենից կախուած ամէն անելու է՝ այս ուղղութեամբ առաջընթաց արձանագրելու համար: Բայց առաւել եւս այս պայմաններում եւ միջավայրում ԱԱԾ պէտք է կրկնապատկի իր զգօնութիւնը», - ըսած է Փաշինեան:

Անդրադառնալով Արցախի հարցին, վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարած է, որ տարիներ շարունակ մեծ խզում եղած է, թէ ինչ խօսուած է դուրսը՝ բանակցութիւններու սեղանին շուրջ, եւ ինչ ներկայացուած է ներսը՝ Հայաստանի հանրութեան. - «Մենք չենք ուզում գնալ նոյն ճանապարհով: Մենք ուզում ենք փակ խորհրդակցութիւններում, հրապարակային ելույթներում եւ բանակցային սեղանի շուրջ խօսել նոյն բովանդակութեան շրջանակում: Մենք չենք

Շար.ը էջ 6

ԼՈՒՐԵՐ

Արժէ Աւելի Աշխուժօրէն Օգտագործել ԵԱԳԿ Մինսքի խումբի Զնարաւորութիւնները. Ստանիսլաւ Զաս

«Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութիւնը (ՀԱՊԿ) կը սատարէ իրավիճակը քաղաքական ճանապարհով կարգաւորելու Հայաստանի քայլերուն», Երեւան կատարելիք աշխատանքային այցին ընդառաջ «Արմէնփրէսին» տուած հարցազրոյցի ընթացքին յայտարարած է ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար՝ Սթանիսլաւ Զաս:



ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար՝ Սթանիսլաւ Զաս

Ան նաեւ ըսած է, որ ՀԱՊԿ-ը սահմանագծում եւ սահմանագատում սկսելու Հայաստանի եւ Ատրպէյճանի որոշումը կը համարէ ներկայ իրավիճակի կրկնութիւնը կանխելու կարեւոր քայլ:

«Մենք մտահոգուած ենք հայատրպէյճանական սահմանին տիրող լարուած իրավիճակով եւ ուշադիր կը հետեւինք անոր: Կը կարծենք, որ սահմանային վէճերը պէտք է լուծուին միայն քաղաքական եւ դիւանագիտական միջոցներով, եւ կ'աջակցինք այս տարուայ Նոյեմբեր 26-ի եռակողմ յայտարարութեամբ ամրագրուած համաձայնութիւններուն՝ քայլեր ձեռնարկել հայ-ատրպէյճանական սահմանին կայունութեան եւ անվտանգութեան մակարդակի բարձրացման, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ այդուհետեւ սահմանագծման հարցերով՝ կողմերու յայտարարութեան արձանագրութեամբ երկկողմանի յանձնաժողովի ստեղծման ուղղութեամբ: Ակնյայտ է, որ իրավիճակի ապամազլցման միջոցառումները աւելի քան երբեք անհրաժեշտ են եւ առաջնահերթ նշանակութիւն ունին», - ըսած է Զաս:

Ան յայտարարած է նաեւ, որ ՀԱՊԿ-ը կը սատարէ Հայաստանի կառավարութեան քայլերուն ստեղծ-

ուած իրավիճակը քաղաքական եւ դիւանագիտական ճանապարհով կարգաւորելու ուղղութեամբ: Այս ուղղութեան դաշինքին միակ էլքը կը համարեն: Ըստ կառուցի գլխաւոր քարտուղարի, արժէ աւելի աշխուժօրէն օգտագործել ԵԱԳԿ Մինսքի խումբի համանախագահութեան հնարաւորութիւնները: Նման մօտեցումը կ'ապահովէ անհրաժեշտ նախադրեալներ այս խնդրի լուծման համար:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութենէն հաղորդեցին, որ Արարատ Միրզոյեան - Սթանիսլաւ Զաս հանդիպում կը նախատեսուի, բայց օրակարգը եւ հանդիպման օրը նշելէ հրաժարեցան:

Դեկտեմբեր 20-ին, ՀԱՊԿ-ի մամուլի քարտուղարը յայտնած էր, որ Զաս Հայաստան պիտի ըլլայ Դեկտեմբեր 22-24-ին, կը հանդիպի վարչապետին, արտաքին գործոց նախարարին, Պաշտպանութեան նախարարին եւ Անվտանգութեան խորհրդի քարտուղարին հետ: Կազմակերպութիւնը այժմ կը նախագահէ Հայաստան:

ՊԵԿ-ը Շուրջ 600 Հազար Տոլարի Թմրանիւթի Մաքսանցութեան Դէպք Բացայայտած Է

Հայաստանի Պետական Եկամուտներու կոմիտէն (ՊԵԿ) հաղորդած է թմրամիջոցի առանձնապէս խոշոր քանակի մաքսանենգութեան դէպք բացայայտելու մասին:

Հաղորդագրութեան համաձայն՝ օրերս ՊԵԿ մաքսանենգութեան դէմ պայքարի վարչութեան, Արեւմտեան մաքսատուն-վարչութեան եւ Ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցներու իրագործած համատեղ միջոցառումներու ի արդիւնք մաքսային հսկողութեան ենթակուած է Սան Փաուլօ-Տոլպայ-Երեւան թռիչքով Երեւանի «Զուարթնոց» օդակայան ժամանած Պրագիլիոյ քաղաքացին եւ վերջինիս ուղեբեռը: Ուղեբեռի մաքսային զննման արդիւնքին յայտնաբերուած է «քոքային» տեսակի թմրամիջոցի սպիտակ փոշինման զանգուածներու պարունակութեամբ 2 փաթեթ՝ թաքցուած ուղեբեռի ներքին հատուածներուն նախապէս պատրաստուած թաքստոցներուն մէջ: Յայտնաբերուած թմրամիջոցի ընդհանուր կշիռը կազմած է 1721 կրամ: Այս խմբաքանակի շուկայական արժէքը կը կազմէ աւելի քան 600 հազար տոլար, նշած է ՊԵԿ-ը:


Փաստի առթիւ ՊԵԿ մաքսանենգութեան դէմ պայքարի վար-



չութենէն ներս նախապատրաստուած են նիւթեր, իսկ օտարերկրացին Երեւանի «Զուարթնոց» օդակայանէն բերման ենթակուած է ՊԵԿ քննչական վարչութիւն: Պրագիլիոյ քաղաքացին ձերբակալուած է, յարուցուած է քրէական գործ:

ՊԵԿ մաքսանենգութեան դէմ պայքարի վարչութեան եւ Ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցները կը շարունակեն համապատասխան միջոցառումներ կատարել՝ գործի հետ առնչութիւն ունեցող հնարաւոր այլ անձերու շրջանակը պարզելու նպատակով, նաեւ ըստուած է ՊԵԿ տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժնի հաղորդագրութեամբ:

Փաշինեան Եւ Ղարիպաշվիլին Առանձնագրոյց Ունեցած Են Թիֆլիսի Մէջ



Հայաստանի եւ Կրաստանի վարչապետները Թիֆլիսի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Թիֆլիսի մէջ առանձնագրոյց ունեցած է վրաստանի կառավարութեան ղեկավար՝ Իրագլի Ղարիպաշվիլիի հետ:

Երկու երկիրներու տնտեսական կապերու ընդլայնման մեծ ներուժ կայ, ըստ Հայաստանի վարչապետի գրասենեակին, նշած են երկու երկիրներու կառավարու-

թեան ղեկավարները՝ շեշտելով, թէ ջանքերը պէտք է ուղղել՝ զայն լաւագոյնս եւ արդիւնաւէտ իրացնելու ուղղութեամբ:

Փաշինեանն ու Ղարիպաշվիլին մտքեր փոխանակած են նաեւ Հարաւային Կովկասին մէջ տեղի ունեցող զարգացումներու, ինչպէս նաեւ երկկողմանի հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցերու շուրջ:

ԱՄՆ Եւ Ֆրանսա Կողջունեն Տասը Հայ Գերիներու Ազատ Արձակումը



Ազատ արձակուած տասը հայ զինուորները օդանաւին մէջ՝ Եւրոպական Միութեան ներկայացուցիչին հետ

Միացեալ Նահանգները կ'ողջունեն անցեալ շաբթուայ Պրիւքսէլի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բանակցութիւններէն յետոյ 10 հայ զինուորներու ազատ արձակումը: Այս մասին Թուրքիոյ իր էջով գրած է Պետական բաժանմունքի խօսնակ՝ Նէտ Փրայս:

«Մենք կոչ կ'ընենք ամբողջութեամբ եւ արագօրէն ազատ արձակելու մնացած բոլոր կալանաւորները», - աւելցուցած է Փրայս: Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոն եւս ողջունած է

Պրիւքսէլի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բանակցութիւններէն յետոյ 10 հայ զինուորներու ազատ արձակումը:

«Ազատ արձակուած են տասը հայ զինուորներ: Ես կ'ուզեմ ողջունել Եւրոպական միութեան վճռական գործողութիւնները, որոնց օգնութեամբ մենք կը շարունակենք առաջ տանիլ երկխօսութեան այս ճանապարհը, որ կը տանի դէպի խաղաղութիւն Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ: Մենք առաջ կը շարժինք», - Թուրքիոյ գրած է Մաքրոն:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Արմեն Գրիգորեան Զանդիպատ Է Նախագահ՝ Ճօ Պայտրնի Ազգային Անվտանգութեան Չարցերով Խորհրդական Ճէյք Սալիվանի Չետ



Արմեն Գրիգորեան եւ Ճէյք Սալիվան հանդիպում ԿՈՆԵՏՆԱՆ Ուաշինգթոնի մէջ

Միացեալ Նահանգներ գտնուող ՀՀ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան հանդիպում ունեցած է ԱՄՆ-ի նախագահ՝ Ճօ Պայտրնի Անվտանգութեան Չարցերով Խորհրդական Ճէյք Սալիվանին հետ:

«Դեկտեմբերի 15-ին ԱՄ քարտուղար Արմէն Գրիգորեանը հանդիպել է ԱՄՆ նախագահ Ճօ Պայտրնի Ազգային Անվտանգութեան Չարցերով Խորհրդական Ճէյք Սալիվանի հետ:

Հանդիպման սկզբում կողմերը միմեանց են փոխանցել իրենց երկրներէ առաջնորդներէ՝ վարչապետ Փաշինեանի եւ նախագահ Պայտրնի ողջունքի խօսքերը:

Հանդիպմանը քննարկուել են Հայաստանի Հանրապետութեան շուրջ եւ տարածաշրջանում անվտանգային միջավայրին վերաբերող չարցերի լայն շրջանակ: Այս համաթեքսթում քննարկուել են

նաեւ տարածաշրջանային տնտեսական համագործակցութեան հնարաւորութիւնները, որոնք անվտանգային յաւելեալ երաշխիքներ կը ստեղծեն երկարաժամկէտ կայունութեան եւ խաղաղութեան հաստատման համար:

Կողմերը արձանագրել են ՀՀ ժողովրդավարական բարեփոխումներէ ձեռքբերումները, որոնք առանձնապատուկ դերակատարութիւն ունեն հայ-ամերիկեան երկկողմ յարաբերութիւններում: Այս առնչութեամբ, Գրիգորեանը շնորհակալութիւն է յայտնել Սալիվանին «Յանուն ժողովրդավարութեան գազաթնաժողով»-ին Հայաստանին հրաւիրելու կապակցութեամբ, ինչը նաեւ այդ շրջաօրէնի փաստացի արձանագրումն է:

Հանդիպման վերջում Արմէն Գրիգորեանը հրաւիրել է Ճէյք Սալիվանին այցելել Հայաստան:

Երեւանի Նախկին Քաղաքապետ Գագիկ Բեգլարեանն Ու Ընտանիքի Անդամները Չրաւիրուած Են Դատախազութիւն

Երեւանի նախկին քաղաքապետ, Փոխադրութեան նախկին նախարար՝ Գագիկ Բեգլարեանն ու անոր ընտանիքի անդամները հրաւիրուած են գլխաւոր դատախազութիւն՝ ծանօթանալու իրենց պատկանող գույքի օրինականութեան վերաբերեալ ուսումնասիրութեան:

Իրաւապահներու կազմած ամփոփագիրը յաջորդ շաբաթ կը ներկայացուի Բեգլարեանին, անոր կնոջ, որդիին եւ դստեր:

Բեգլարեաններուն կասկածելի ծագում ունեցող գույքը կալանքի տակ է, դատախազութիւնը, սակայն, չի մանրամասներ, թէ ինչ արժողութեան եւ քանի միւսերը գույքի մասին է խօսքը:

Այս մանրամասնութիւններէն տեղեակ չէր նաեւ նախկին ազդեցիկ պաշտօնեայի փաստաբան՝ Հրանդ Անանեան. -«Բացարձակ տեղեակ չենք: Հրապարակայնացրել են առանց մեզ ծանուցելու, առանց մեզ հարց տալու, ինչ-որ բան են հրապարակել: Տեղեակ չենք ո՛չ տեսակից, ո՛չ քանակից, ո՛չ հասցէից»:

Փաստաբան Անանեան հաղորդեց, որ առաջիկայ օրերուն կը ծանօթանայ դատախազութեան ուսումնասիրութեան. - «Պիտի գնամ նիւթերին ծանօթանամ: Նախատեսել եմ մօտակայ երկու օրը գնամ ծանօթանամ, հասկանամ»:

Անկէ ետք պարզ կ'ըլլայ, թէ Բեգլարեանները կը համաձայնի՞ն կասկածելի ծագում ունեցող գույքի 75 տոկոսը առանց դատարանի որոշման տալ պետութեան, թէ՞ այս գործը կ'երթայ դատարան: Նման հնարաւորութիւն կու տայ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրէնքը: Եթէ քաղաքացին չի համաձայնիր, հարցը արդէն դատարան կը քննուի:

Բացի գույքի ծագման ստուգումներէն, Գագիկ Բեգլարեան նաեւ մեղադրեալ է դրամաւուացման՝ մօտ 480 հազար տոլար արժողութեամբ պետական գույքը յափշտակելու գործով: Ամիսներ տեւած հետախուզումէն յետոյ ան ձերբակալուած է այս Մայիսին «Զուարթնոց» օդակայանը, ապա մէկ օրուայ կալանքէն յետոյ ազատ արձակուած է 105 հազար տոլար գրաւի դիմաց: Դատախազութեան «Ազատութիւն»-ին հաղորդած էին, որ իրաւապահներուն ինքնակամ ներկայացած Բեգլարեան դատախազութեան աւանդի հաշուոյն փոխանցած է մեղադրանքի համաձայն պետութեան պատճառած վնասին համարժէք գումարը եւ այս հանգամանքն ալ հաշուի առնելով՝ դատախազը որոշած էր զինք ազատ



Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարեան

արձակել: Սերժ Սարգսեանի իշխանութեան տարիներուն՝ 2012-2016 թուականներուն Փոխադրութեան եւ կապի նախարարի պաշտօնը զբաւած Գագիկ Բեգլարեան նաեւ վկայ է «Հիւսիս-հարաւ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի չարաչափութեան գործով: Քննչական կոմիտէի հաղորդմամբ, այս ծրագրի ընթացքին պետութիւնը կրած է աւելի քան 48 միլիոն տոլարի վնաս:

Կասկածելի ծագում ունեցող գույքի ուսումնասիրութիւններուն մէջ ներգրաւուած են այլ հնչեղ անուններ, անոնց կարգին են երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբօր՝ հետախուզման մէջ գտնուող Լեւոն Սարգսեանի դուստրը, ԱԺ նախկին նախագահ՝ Գալուստ Սահակեանի որդին, Պետական գույքի կառավարման վարչութեան նախկին պետ Արման Սահակեան:

«Արդէն իսկ դատական հարցեր կան ներկայացուած՝ կապուած հարցի ապահովման միջոցների ձեռնարկման հետ: Խօսքը վերաբերում է այն դէպքերին, երբ որ աւարտուել են արդէն վարույթները գույքի նկատմամբ կալանք կիրառելու: Որոշների պարագայում իրականացում են բանակցութիւններ համապատասխան անձանց հետ՝ գույքը պետութեանը վերադարձնելու նպատակով, օրէնքով սահմանուած համամասնութիւններէ շրջանակում», - «Ազատութիւն»-ին ըսաւ Գլխաւոր դատախազի խորհրդական՝ Գոռ Աբրահամեան:

Երկու գործն ալ արդէն դատարան հասած է: Անոնք կը վերաբերին Ազգային Անվտանգութեան ծառայութեան նախկին գնդապետ Սերոբ Յարութիւնեանին եւ նախկին ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանին ու անոնց ընտանիքներուն պատկանող գույքին:

Յայտնի Են Չայաստանի 2021-ի 10 Լաւագոյն Մարզիկները



Մարզական լրագրողներու եւ ազգային խումբերու գլխաւոր մարզիչներու քուէարկութեան արդիւնքով յայտնի դարձած են Հայաստանի 2021 թուականի «Տարուայ 10 լաւագոյն մարզիկներու» անունները:

«Արմէնպրէս»-ի հաղորդմամբ՝ Դեկտեմբեր 21-ին կայացած քուէարկութեան մասնակցեցան լրագրողներէն մարզական 15 թղթակիրը եւ ազգային դաշնութիւններու ներկայացուցիչներ:

Քուէարկութեան արդիւնքով ձեւաւորուած է հետեւեալ տասնեակը՝ ըստ այբբենական կարգի,-

Ալեքսանեան Արթուր Ամոյեան Մայիսա Պաշկով Յովհաննէս Դաւթեան Արթուր Լալայեան Վարազդատ Դանիէլեան Էլինա Յարութիւնեան Արսէն Մարտիրոսեան Սիմոն Մինասեան Գոռ Չարոյեան Դաւիթ

«Տարուայ համակրանք» մրցանակը, որու համար քուէարկած են երկրպագուները, ստացած է աշխարհի ախոյեան Մայիսա Ամոյեան:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Massis Weekly

Volume 41, No. 48

Saturday, DECEMBER 25, 2021

PM Pashinyan Sees Opportunities for an “Era of Peaceful Development in the Region”



YEREVAN-- The Armenian government will do its best to move towards opening an era of peaceful development of the region, Armenian Prime Minister Nikol Pashinyan said on Monday.

"I would like to note that after meetings in Sochi and Brussels, I see an opportunity to move forward step by step to open an era of peaceful development for our country and the region," he said at a meeting with National Security Service (NSS) officials.

At the same time, Pashinyan

stressed that the problems facing Armenia are not resolved and measures should be taken with the direct involvement of the NSS to best protect the Armenian statehood, sovereignty, independence, constitution, legislation and territorial integrity.

In a related development, during a government meeting, Pashinyan confirmed that Armenia and Azerbaijan to reopen Yerashk-Julfa-Meghri-Horadiz Railway.

Continued on page 3

Armenia's Security Council Secretary Meets With US National Security Adviser at the White House



WASHINGTON, DC -- US National Security Adviser Jake Sullivan met with National Security Council Secretary Armen Grigoryan of Armenia at the White House on December 15.

In a statement the White House said that Mr. Sullivan conveyed the commitment of the United States to peace, security, and prosperity in Armenia and the South Caucasus region.

"He expressed concern over ongoing tensions between Armenia and Azerbaijan, and emphasized that military movements near un-demarcated borders are irresponsible and provocative. He welcomed the ongoing com-

munication between the two sides and emphasized the U.S. commitment to continue supporting confidence-building measures and regional reconciliation both bilaterally and as a Minsk Group Co-Chair.

Mr. Sullivan welcomed the announcement yesterday that Turkey and Armenia will appoint special envoys to discuss the normalization process.

Mr. Sullivan appreciated Prime Minister Nikol Pashinyan's participation in The Summit for Democracy and underscored our strong cooperation on reform, democratic institution-building, and economic development in Armenia", the statement says.

Ruben Rubinyan Appointed Armenia's Representative for Dialogue with Turkey

YEREVAN -- Deputy Speaker of the RA National Assembly Ruben Rubinyan will be the Special Representative of Armenia for the dialogue process between Armenia and Turkey. Press Secretary of the Armenian Foreign Ministry Vahan Hunanyan announced this on his Facebook page.

On December 13, Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu announced that Turkey and Armenia may appoint special representatives to normalize relations between the countries and their intention to open charter flights to Yerevan. Later, Cavusoglu announced the appointment of the former Turkish ambassador to the United States, Serdar Kilic, as a special representative.

On December 24, 1991, Turkey officially recognized the Republic of Armenia, but still refuses to establish diplomatic relations with Armenia.

In 1993, Turkey unilaterally closed its air and land borders with Armenia. The air border was opened in 1995 under pressure from the international community. For the opening of



the land border and the establishment of diplomatic relations, Turkey puts forward a number of unacceptable conditions, in particular, the refusal of international recognition of the Armenian Genocide.

Meanwhile, Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu announced that the Armenian and Turkish negotiators will hold their first meeting soon. But he gave no concrete dates.

Armenia's Maléna Wins Junior Eurovision Song Contest



PARIS -- 14-year-old Maléna representing Armenia has won the Junior Eurovision Song Contest 2021, giving her country its second win and first since 2010. Maléna stunned the millions watching around the world on TV and online with an incredible performance of "Qami Qami, finishing with an impressive 224 points.

19 countries participated under the slogan "Imagine" in the two hours show broadcast live from La Seine Musicale in Paris and hosted by Carla, Élodie Gossuin and Olivier Minne.

Armenia first took part in the Junior Eurovision Song Contest in 2007 and has finished in the Top 3 seven times in total.

Maléna from Yerevan is a talented cellist, and has dreamed about representing Armenia for many years; she participated in her nation's selection competition back in 2018.

Sara James from Poland, received

218 points to finish in 2nd place with "Somebody". France's Enzo singing "Tic Tac" was 3rd with 187 points.

Viewers in the 19 participating countries and a further 180 nations helped decide the winner by voting online. Juries made up of three industry experts and two children from each participating country provided 50% of the scores.

4.3 million valid votes were received in the online poll which was split into two rounds; one before the show based on preview clips and a second that opened after the last live performance, allowing viewers to cast their votes based on what they saw on stage.

Martin Österdahl, the Contest's Executive Supervisor, said "Congratulations to our super-talented winner Maléna who gave a fantastic performance of "Qami Qami" and to all the great young artists who illuminated the stage here in the City of Light.

Putin, Macron Discuss Nagorno Karabakh Settlement



MOSCOW -- Russian and French Presidents Vladimir Putin and Emmanuel Macron discussed the Nagorno-Karabakh settlement by telephone on Tuesday, the Kremlin website reported.

It said during an exchange of views on the Nagorno-Karabakh conflict settlement, satisfaction was expressed over the stabilization of the situation in the conflict zone and the efforts being made to establish peace-

ful life and restore economic and transport links in the region," the press release said.

It said also that regarding the Nagorno-Karabakh issue Russia and France are acting and will continue to act synchronously.

During the phone conversation, Putin congratulated Emmanuel Macron on his birthday; the leaders also exchanged good wishes on the eve of the Christmas and New Year holidays.

Ten Armenian Detainees Returned Home From Azerbaijan



YEREVAN -- The Armenian Foreign Ministry announced the return of 10 Armenian POWs from Azerbaijan.

"With the mediation of the President of the European Council Charles Michel, 10 prisoners of war returned to their homeland," the press secretary of the RA Foreign Ministry said on Facebook.

The detainees were repatriated with the mediation of the President of EU Council Charles Michel.

"Happy to have been able to repatriate 10 Armenian servicemen," EU Special Representative for the South Caucasus and the crisis in Georgia Tovio Klaar said in a Twitter post.

Tovio Klaar called it "an important gesture by Azerbaijan in the process of addressing humanitarian issues"

"The European Union will continue to work with both countries to build on the successful meetings of the President of the EU Council with Ar-

menian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev".

For his part President of the EU Council Charles Michel has welcomed the release of the Armenian detainees.

"Warmly welcome Baku's release of 10 Armenian detainees in follow up to discussions with the President of Azerbaijan Ilham Aliyev and the Prime Minister of Armenia Nikol Pashinyan," describing it as "an important humanitarian gesture demonstrating the mutual will to strengthen confidence as discussed in Brussels."

The Armenian Foreign Ministry has published the names and years of birth of the returned prisoners:

Galstyan Hrachik (1990), Dilanyan Mkrtich (1982), Harutyunyan Gagik (1982), Poghosyan Radik (1990), Ghevondyan Andranik (1973), Nazaryan Artur (1978), Shahinyan Marat (1977), Petrosyan Sevek (1984), Stepanyan Karlen (1974) and Vasilyan Hayk (1984).

Iranian MPs Visit Armenian Genocide Memorial



YEREVAN -- On a working visit to Armenia, Members of the delegation led by the head of the Iran-Armenia Friendship Group of Iran's Majlis Seyed Mahdi Farshadan visited the Armenian Genocide Memorial on December 21 accompanied by Gevorg Papoyan, head of the Armenia-Iran Friendship Group at the Armenian National Assembly.

The guests were greeted by Lusine Abrahamyan, Deputy Director for Museum Works of the Armenian Genocide Museum-Institute, who presented the history of the memorial. She briefed the guests on the story of three khachkars placed in the area of Tsitsernakaberd, which are dedicated

to the memory of the Armenians who died during the ethnic cleansing of the Armenian population in Azerbaijan at the end of the 20th century.

The Iranian MPs including two Armenian deputies of the Iranian Parliament Ara Shaverdyan and Robert Beglaryan, laid flowers at the eternal flame and observed a minute of silence in memory of the consecrated martyrs of the Armenian Genocide.

They also toured the Armenian Genocide Museum and got acquainted with permanent and temporary exhibitions.

At the end of the visit, the members of the delegation made notes in the Book of Honorary Guests.

EBRD and EU to Fund SMEs in Armenia



The European Bank for Reconstruction and Development (EBRD) is providing a •5 million financial support package to Armeconombank in Armenia to facilitate the private sector's transition to more sustainable, low-carbon and climate-resilient practices. The project is supported by the European Union (EU), with grant incentives allocated through Armeconombank.

The package is provided under the EU4Business-EBRD credit line, with incentives for on-lending to local small and medium-sized enterprises (SMEs) with export potential for investments in climate change mitigation and adaptation. It will also help SMEs to upgrade technologies and services to EU standards while promoting the use of green technologies. This is the fourth project to be signed in Armenia under the programme.

The EU4Business-EBRD credit line is a flagship initiative, helping local companies increase their competitiveness at home and abroad by upgrading

their production facilities and processes to EU standards. The companies will be able to improve the working conditions of their employees and foster environmental sustainability. At least 70 per cent of the loan proceeds will be used to finance investments in green technologies in accordance with the EBRD's Green Economy Transition (GET) approach. Borrowers are eligible to receive incentive grants and technical advice, both funded by the EU under its EU4Business initiative. The programme is also available in Georgia, Moldova and Ukraine.

Dimitri Gvindadze, EBRD Head of Armenia, said: "We are pleased to step up our support for SMEs in Armenia together with our long-standing partner Armeconombank. The funding aims to facilitate the competitiveness of local firms in Armenia by helping to invest in modern technology that will allow companies to strengthen

Representatives Speier and Eshoo Urge Continued Funding for Artsakh Demining



WASHINGTON, DC -- Representatives Jackie Speier (CA-14) and Anna G. Eshoo (CA-18) led a letter with 33 colleagues in support of including demining assistance for Artsakh in final Fiscal Year 2022 appropriations legislation.

The letter to Chairwoman Barbara Lee and Ranking Member Hal Rogers of the House's Appropriations subcommittee on State, Foreign Operations, and Related Programs (SFOPs), thanked them for the inclusion of the \$2 million demining assistance for the Republic of Artsakh (Nagorno-Karabakh) in the committee report that accompanied the House-passed FY22 SFOPs appropriations bill, and advocated everything be to ensure that the funding is not eliminated through the conference process.

The full text of the letter is below:

Dear Chairwoman Lee and Ranking Member Rogers,

We write to thank the Appropriations Subcommittee on State, Foreign Operations, and Related Programs (SFOPs) for including \$2 million in demining assistance for the Republic of Artsakh (Nagorno-Karabakh) in the committee report that accompanied the House-passed FY22 SFOPs appropriations bill. These funds are critically needed to protect the people of Artsakh from deadly explosives, and we urge you to do everything you can to ensure that this funding is not eliminated through the conference process.

